PETER BALAKIAN, Black Dog of Fate, *New York, 1997, 292p.*
ՓԻԹԸՐ ԲԱԼԱՔՅԱՆ, Ճակատագրի Սև շունը, Նյու-Յորք, 1997, 292 էջ:

1997թ. ամերիկահայ գրող Փ.Բալաքյանը լույս է ընծայում «Ճակատագրի Սև շունը» վեպը, որով նոր էջ է բացում հայկական ցեղասպանությունը մարմնավորող երկերի շարքում: Հայկական եղեռնի թեմային անդրադարձել են բազմաթիվ ամերիկացի հեղինակներ, այդ թվում այնպիսի կարկառուն դեմքեր, ինչպիսիք են Էլլին Գրոսքլոուսը, Լեոն-Զավեն Սյուրմելյանը, Մայքլ Առլենը և Փիթեր Նաջարյանը: Այս գրողներից բացի, եղել են նաև շատ ուրիշներ, որոնք, ճիշտ է, մեծ հռչակ են վայելում գրական շրջանակներում, սակայն մանրակրկիտ լուսաբանել են հայկական եղեռնը (Զ. Հեփվորս, Հայաստանի միջով ձիու թամբին, Նյու-Յորք, 1898, Զ.Հաճյան, Մամիկոն, Նյու-Յորք, 1982): Թվում է, թե մինչև 1997թ. ամերիկացի գրողներն արդեն ամեն ինչ ասել էին Հայոց ցեղասպանության մասին: Սակայն 1915թ. եղերական դեպքերին նվիրված երկերի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ հայկական եղեռնը, թեպետ խորապես լուսաբանված, սակայն չսպառված թեմաների շարքին է պատկանում:

Փ.Բալաքյանի «Ճակատագրի Սև շունը» վեպը արդիականության ոգով գրված մի ստեղծագործություն է, որն արտացոլում է ցեղասպանության խնդիրը՝ իր ողջ չափերով և բարդությամբ, խորհրդանշում է հայ ժողովրդի պատմությունը, նրա դժվարին ճակատագիրը, նրա գլխով անցած փորձությունները:

Փ.Բալաքյանի վեպը ոչ այնքան հաճախ հանդիպող գործերից է, որոնք օժտված են արժանիքների մի ամբողջ շարքով: Դատողությունների արտակարգ հստակությունն ու տրամաբանվածությունը, կուռ կառուցվածքը, պատմական հենքի առկայությունը, կատարված վերլուծությունների հետևողականությունը, պատմական հեռատեսությունը և լուսավորական արժեքը «Ճակատագրի Սև շունը» վեպի անօտարելի գծերն են: Ամերիկյան գրականության մեջ երբևէ չէր ստեղծվել մի երկ, որում հայկական եղեռնի պատմական կերպը այնպիսի մեծ հաջողությամբ ներկայացված լինի, ինչպես Փ.Բալաքյանի գրքում: Սփյուռքահայ գրողը շատ լավ է զգում պատմական նյութը: Օբյեկտիվորեն կշռադատելով բոլոր փաստերը՝ նա հանգում է ճիշտ եզրակացությունների և հստակ տարանջատում է երևույթների հուզական և տրամաբանական կողմերը:

«Ճակատագրի Սև շունը» վեպում պատմությունն ու արվեստը միահյուսված են զարմանալի ներդաշնակությամբ: Կան հոգեբանական խոր դիտարկումներ, մարդկային հոգեվիճակների ու տրամադրությունների փայլուն նկարագրություններ: Վեպը հագեցած է հարուստ, գունագեղ ու միևնույն ժամանակ ռեալիստական կերպարներով: Որպես օրինակ, կարելի է բերել Գերարդ Բալաքյանին և Նաֆինա Արուսյանին: Ռովանդակությամբ Փ.Բալաքյանի գիրքը շատ խորն է ու հարուստ: Բավական է միայն ասել, որ այն ունի այնպիսի ընդգրկուն թեմաներ, ինչպիսիք են ցեղասպանությունը և պանդխտությունը: Սփյուռքահայ գրողը, զարմանալի խորությամբ թափանցելով այդ թեմաների մեջ, քննության է առել դրանց առնչվող շատ ու շատ խնդիրներ: Այս առումով «Ճակատագրի Սև շունը» զգալիորեն նման է Մայքլ Առլենի «Ուղևորություն դեպի Արարատ» վեպին: Առլենի նման Բալաքյանը ևս Հայոց ցեղասպանությունը պատկերել է մանրակրկիտ և համակողմանի, որը, սակայն, առավել մեծ խստապահանջությամբ է իրողություններ ընտրել, այդ իսկ պատճառով կարողացել է խուսափել հակասություններից:

Փիթեր Բալաքյանի երկը կարծես հակիրճ հանրագիտարան լինի, որում ցանկացած ազգության պատկանող ընթերցող կարող է օբյեկտիվ ու սպառիչ պատկերացում ստանալ հայերի մասին: Վեպում հայ ժողովրդի պատմությանը զուգահեռ ներկայացված են նրա առաջ ծառացած խնդիրները, զգացումներն ու խոհերը, մտածելակերպն ու հոգեբանությունը, կենսակերպն ու մշակույթը:

Հարկ է ավելացնել նաև, որ «Ճակատագրի Սև շունը», ի լրումն արդեն նշված արժանիքների, ունի քարոզչական նշանակություն: Ամերիկահայ գրողը փորձում է փաստերի լեզվով համոզել աշխարհին, որ 1915թ. ողբերգական իրադարձությունները պետք է արժանանան անաչառ գնահատականի և խիստ դատապարտման: Հայկական ցեղասպանության ճանաչման հարցը տարիներ շարունակ տարաբնույթ քաղաքական շահարկումների առարկա է եղել: Այն մինչև օրս էլ մնում է նույն երերուն կացության մեջ: Կասկածից վեր է, որ ոչ մի գեղարվեստական երկ, որքան էլ որ արվեստ ունենա, չի կարող ներազդել քաղաքական վերնախավերի վրա՝ դրդելով նրանց ընդունել պատմական ճշմարտությունը: Սակայն գրական երկը, տվյալ դեպքում «Ճակատագրի Սև շունը», կարող է ներազդել աշխարհի ժողովուրդների գիտակցության վրա, հասարակական կարծիք ձևավորել, նպաստավոր վերաբերմունք մշակել հայության և հայկական ցեղասպանության նկատմամբ, սրանով իսկ ուղի հարթել եղեռնը աշխարհին ճանաչել տալու խնդրում: Այդ իսկ պատճառով Փ.Բալաքյանի երկը լիարժեք կարելի է դասել հայկական ցեղասպանությունը մարմնավորող լավագույն գործերի շարքին:

Տ.Է.ՄԱԼՈՒՄՅԱՆ